ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ 2024-2025 ՈՒՍՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ

23.05.2025

Սիրելի՛ շրջանավարտներ

Սրտանց շնորհավորում եմ «Վերջին դասի» տոնական միջոցառման կապակցությամբ, որն այսօր մեր դպրոցներում կազմակերպում են թե՛ հիմնական, թե՛ միջնակարգ կրթության ծրագրերով ուսումնառությունն ավարտող աշակերտները:

Ձեր կյանքի մի ամբողջ մեծ ու պայծառ շրջան, որ սկսել եք որպես առաջին դասարանցիներ, ավարտում եք այսօր: Եվ, հավանաբար, հենց «Վերջին դասին» է, որ հիշում եք առաջին հաղթանակների ուրախությունը, ձեր քրտնաջան աշխատանքը, հիշում եք, թե ինչպիսին էին ուսման դժվարին քայլերը, գրած առաջին տառերը, կարդացած առաջին բառը:

Հիմա ամեն մեկդ ձեր ճանապարհն ունեք: Աշխարհը բաց է ձեզ համար՝ ինքնադրսևորման, անձնական աճի, ստեղծագործական որոնումների և մասնագիտական զարգացման բոլոր հնարավորություններով:

Դպրոցական ուսումնառության ավարտի օրը հատուկ է ոչ միայն ձեր, այլև ծնողների և ուսուցիչների համար: Ուստի՝ բոլորիս երախտագիտության խոսքերը նրանց՝ իրենց գիտելիքները, իմաստնությունը, փորձը փոխանցելու և, ամենակարևորը, անցած բոլոր տարիներին ձեզ անվերապահորեն հավատալու համար:

Մի՛ կորցրեք կապն ուսուցիչների հետ. նրանք իրենց հոգու մի կտոր են դրել ձեր մեջ և անկեղծորեն հետևելու են անցնելիք ճանապարհին՝ հպարտորեն ուրախանալով ձեր նվաճումներով: Առողջություն և հետագա հաջողություններ եմ մաղթում մանկավարժներին:

Սիրելի՛ շրջանավարտներ, այս ուսումնական տարին հայտարարվել էր մշակութային կրթության տարի, որի համատեքստում նաև «Վերջին դասի» միջոցառումները նորովի կազմակերպելու կոչ կար: Եվ ուրախ ենք տեսնել, որ Սյունիքի մարզում ևս կան կրթօջախներ, որ ավարտական միջոցառումն անում են այդ ձևաչափով՝ հանդես գալով մշակութային հետաքրքիր նախագծերով:

Վստահ եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը կկարողանա արժանի տեղ ու կիրառություն գտնել իր շնորհների, ձեռք բերած մասնագիտության, տաղանդի և գիտելիքների համար հարազատ Սյունիքում, և մենք միշտ այստեղ ձեր կողքին ենք:

Բոլորիդ մաղթում եմ ինքնավստահություն, լավատեսություն, առողջություն, հաջողություն՝ բոլոր ջանքերում, բարձր նպատակներ և փայլուն հաղթանակներ: Հիշե՛ք, որ ամեն ինչ կախված է ձեր համառությունից, տքնաջան աշխատանքից, առաջ շարժվելու ցանկությունից և սեփական ուժերի նկատմամբ հավատից: Թո՛ղ դպրոցի տված գիտելիքներն օգնեն իրականացնել բոլոր ծրագրերն ու երազանքները:

Բարի՛ երթ 2024-2025 ուստարվա շրջանավարտներին: